

ներմուծելի բարենորոգմանց խոստումը ի կատար հանելու մասին:

Պատմութիւնը կրկնուում է շարունակ, և ինչպէս որ 1862-ին թուրքիոյ մեծ նպարզոս հռչակաւոր Ալի բաշան պատասխանեց մի անկեղծ և բարեսիրտ կուսակալին—Խայրէզդին բաշային—«Դուք բոլորովին պետի չհամարձակուիք պետական թոլիսիկային մէջ խառնուելու» այսպէս էլ առաջին մինիստրը մեծագոյն

Բրիտանիոյ խստիւ մեղադրեց հարեւրապետ Ե. Գ.-ին Անգլիոյ Պետական թոլիսիկային մէջ խառնուած լինելուն համար, նրան յիշեցնելով որ ինքը ուղարկուած էր իբր ներկայացուցիչ Մեծն Բրիտանիոյ և միշտ աչքի տալով ունենալու էր Անգլիան շահերը և ոչ եթէ ինչ անելու մասին խորհուրդներ տալու էր պետութեան:

Sapienti sat.

ՊՈՍՏ—ԱՐԿՂ

ՖԻՐԱՆՍԻԱ. առ.-ին—Դուք զրոււմ էք թէ Դաշնակցութիւնը բոյկոտ է հրատարակել «Մուրճի» դէմ: Բացարձակ այդպիսի կարգադրութիւն ինձ անյայտ է, իսկ դրանց բիւրօկրատիայի զաղտնի հրահանգների և շրջաբերականների մասին գուցէ գիտեն՝ ձեզ այդ բանը հաղորդողները: Զգիտեմ ուրիշ բն այդ պարոնները, սակայն եթէ իմ ենթադրածներն են, այո՛—նրանք մորձաւոր կապեր ունեն այդ ազգային բիւրօկրատիայի «բարձր շրջանների» հետ եւ երեւի, ստոյգ գիտեն:

ՍԱՐԻՂԱՄՐՇ. պ. կ. Պ.—Զեր ճաշակով «ազգային» վէպեր եւ բանաստեղծութիւններ չենք տպուում: Եթէ չէք հաւանում մեր ուղղութիւնը կարող էք ձեր աշխարհայայացքին համապատասխան թերթերի, ամսագրերի դիմել: Փառք Աստծոյ, այդ կողմից Հայ ազգը բախտաւոր է... ունի մօտ 80 ամուսն պարբերական հրատարակութիւններ:

Նմրագիր-հրատարակիչ՝ Լ. Սարգսեան

Իրաւատէր՝ Վ. Գառնանեան

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

«ԱՐԵԱՆ ԶԱՅՆԵՐԻ»

Հրատարակիչ Ստեփան Մելիք Սողոմոնեանցը, յայտնում է իգիտութիւն հասարակութեան, որ «Արեան Զայների» № 101-երդ երեսի վերջին տողում, սպրտե: է մի խոշոր տպագրական սխալ, փոխանակ թուրքասէր ըուլանդցիքի պէտք է լինէր հայրենասէր ըուլանդցիք, Միկնոյն ժամանակ խնդրում է գրավաճառներին և գնող անհատներին որ յիշեալ սխալը ուղղելու համար անմիջապէս կտրել № 101 թերթը: (1—1)